

նոր ընդհանրացած անունն է Ս. Հրեշտակապետսf(\*) : Եկեղեցւոյ Հայրերը զանազան մեկնողական բացատրութիւններ կուտան Աննայի տան մէջ յանդուզն ըսպասաւորին կողմէ Յիսուսի տրուած ծանր ապտակին մասին, և կը յայտնեն, մասնաւորապէս Ոսկեբերան, թէ այդ ապտակահարութեան ժամանակ, երկնային զինուորները սարսափեցան և ծածկեցին իրենց երեսը : Աստուածորդւոյն յանդգնաբար տրուած այդ ապտակի սաստկութիւնը տագնապեցուց այդ հրեղէն էակները ու անոնք սահմուկած մնացին մարդ արարածին այդ մեծ անիրաւութեան համար : Եկեղեցւոյ Հայրերուն քրիստոնէական այս ըմբռնումին համաձայն էր որ բարեպաշտները ի պատիւ եւ ի պարծանս երկնային զօրութեանց Աննայի տան տեղւոյն վրայ կը հիմնարկեն վանք և եկեղեցի : Ս. Հայրերու նոյն բացատրութեան կատարելապէս համաձայն է նաև մեր Ս. Երեսէս Շնորհալի հայրապետն ալ, երբ իր «Այսօր անձառ» երգին մէջ կը գրէ .

«Ծառայն զերեսն այն ապտակէր

Յորմէ Սրովբէն թեւասքօղէր(\*\*)» :

(\*) Հայեր այս մասին կ'աւանդեն հետաքրքրական գրոյց մը : Միֆայէլ եւ Գաբրիէլ հրեշտակապետներ օգնութեան հասած էին չեմ գիտեմ նախնական երեսունեայ Հայաստանի ո՛ր վեհապետին : Անոնք ի փոխարէն պատճառ դրած էին անոր այս սուրբ տեղւոյն վրայ եկեղեցի մը շինելու . եւ վեհապետը հրաշալի պայմաններուն տակ ազատուած է : Նոյն եկեղեցիին կողակին մէջ խիստ անուր որմանկար մը կը յիշեցրնէ բարեպաշտիկ գրոյցը (P. P. V. A. էջ 501) :

(\*\*) Ս. Հրեշտակապետաց վանքին անուանակոչութեան ծագումը կը կարծուի Յովն. ԺԸ. 22 համարին մէջ յիշուած դէպքէն . «Ս. Եփրեմ իմանայ վասն ժամուս, յորում սպասաւորն Կայիափայ (Աննայ) ապսակ եհար Քրիստոսի, զարհուրեցան (աւտ) ամենայն հրեշտակ եւ հրեշտակապետս Միխայէլ եւ Գաբրիէլ, եւ զերեսս իւրեանց թեւօք ծած-